

ՀԵՉԱԿ

ԳԼԳՔԵՐԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Այն մարդը, որ ահա գրեթե չորս տարից ի վեր որպէս կապարի մի կոյտ ծանրանում էր հայ ժողովրդի կրօնի վրայ, վերջապէս գլորվեցաւ հայ հասարակական ասպարէզից: Այդ մարդու, որ այժմ իրան զարգար ելու համար չունի այլ եւս պատրիարքական սեւ վերջաբեր, այդ մարդու անկումը տեղի ունեցաւ հայ ժողովրդի ծայրայեղ գեղեցութեան, զայրոյթի ու զգուշութեան ազդեցութեան տակ, զգացումներ, որոնք միայն կարողացել էր ներշնչել դէպի իրան Ազգեան-արմաշին: Այդ գեղեցութեան, հայ ժողովրդի արդար պահանջի արտայայտչն ու գործադրողը, ինչպէս տարիներից ի վեր մինչեւ հիմա, այսօր էլ հանդիսացաւ Հնչակեան Կուսակցութիւնը: Այդ յեղափոխական մարմնի պաշտօնական եւ խիստ պահանջի ու սպառնալիքի տակ միայն Ազգեանը վերջապէս ստիպվեցաւ ազատել հայութեան իր վնասակար, ստոր, դաւաճան անձնաւորութիւնից և ամօթահար ու ծածկված աղբով՝ հրաժարվել ու յետ քաշվել ազգային գործերից: Ճիշդ այնպէս, ինչպէս իր մեծաւորը, սուլթանի փոքրաւոր Մաքսուտ Սիմօնը, մէկ-երկու ամիս առաջ ստիպված արեց հայ ժողովրդի պահանջի և նոյն յեղափոխական մարմնի գնդակի տակ: Հնչակեան հարուածներն այդ երկու վատահամբաւ եւ երկար ժամանակ հայ ժողովրդին չարաբող անձերի գլխին այնքան ուժգին, վճռական ու սպառնական եղան որ դրանց հայրախնամ պետը, իր Երևալի բանտում փակված հէքիսի երկսթե եօթ դռներով, հարկադրվեցաւ զիջանել հայ հասարակաց կարծիքին, ներկայ պարագայում Հնչակեաններին, որ այդ կարծիքի միակ բացարձակ ու գործնական արտայայտիչներն են:

Արդարեւ, մեր յաղթութիւնը, յեղափոխական դաշտի արի յաղթութիւնը կատարեալ է այդ անսուրբ երեւակ դաշնակցութեան վրայ:

Այն, ինչ միւս կողմից գլխաւորն ու ամենաբնորոշն է, դա — առհասարակ հայ կղերականութեան և առհասարակ հայ ամիրայութեան, հայ դրամատէր դասակարգի երկու ամենակարեւոր ներկայացուցիչների հարուածվելն է: Այդ երկու վտանքն էլ իրանց բնաւորութեան ու գործերի մէջ ամփոփում են այն բոլոր ախտերը, որոնցով այնքան հարուստ են դրանց դասակար-

գերը: Կատաղի թշնամի ժողովրդային ընդհանրութեան շահերի, այդ երկու անձերն իրանց այդ յատկութեամբ հաւատարիմ արտայայտիչ են իրանց դասակարգերի ըզգացման ու վերաբերութեան դէպի ժողովրդային ընդհանրութիւնը: Դրանց դասակարգերի շահերը կատարելապէս հակառակ են աշխատաւոր դասակարգերի շահերին, մի դասակարգ, որ ժողովրդային մեծամասնութիւնը է կազմում: Դրանց դասակարգերը տղուկի պէս ապրում, վայելում են, մարմնով ու քսակով պարարտանում են աշխատաւոր դասակարգի հաշին, սրա աշխատանքը չարաչար շահագործելով, օգտվելով սրա տգիտութիւնից, սրա անասնական համբերութիւնից, սրա ըստրկական ինձակից, որոնց մէջ ամենայն ջանքով միշտ ճրգնում են պահել նրան, աշխատաւոր ժողովրդին:

Հենց ճիշդ այդպէս էր այն երկու տիրահոգակ դաւաճանների ամբողջ գործունէութիւնը թէ հրապարակապէս և թէ մասնաւորապէս: Դրանց հարուածելով, ուրեմն, Հնչակեան Կուսակցութիւնը, հաւատարիմ իր հիմնական սկզբունքներին և հենց դրանով հաւատարիմ նաեւ ժողովրդային ընդհանրութեան պատմական շահերին, հարուածեց իւր միայն այդ թշնամի կառավարութեան ծախված, դաւաճան, աղքատորձան անձերին, որով և սուլթանի կառավարութեան — դա՛ ինքն ըստ ինքեան, այլ նաեւ նրանց ներկայացրած երկու տղուկ, շահագործող և ժողովրդի աշխատաւոր մէջքին ահագին բռնի նման ընկած երկու դասակարգի — կղերականութեան և դրամատէր դասակարգին: Հարուածը ստացան այդ երկու դասակարգային սկզբունքները:

Այդ դէպքում աշխատաւոր ընդհանրութեան պատմական շահերն ու ձգտումները գտան իրանց էական, արտայայտութիւնն ու ներքին իմաստը, և դրանով տարին կատարեալ յաղթանակ:

Այդ ժողովուրդը թող թուի առնի, ոգեւորվէ միշտ և առաջ գնայ: Իր յաղթութիւնը յեղափոխական յարատեւութեան ու իր շահերի դիտակցութեան մէջն է: Նրա հետ, նրանով և նրա համար է, որ գոյութիւն ունենք մենք, Հնչակեաններս: Հարուածներ, ուրեմն, ժողովրդի ամեն կարգի թշնամի դասակարգերին ու հաստատութիւններին, և ամուր հարուածներ:

ԹՎ ԹԱՆԿ ՅՈՒԹՈՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԳԻՆԵՐՑ

ՀՆՁՆԱԿՆԵՐ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ Ի Կ. ՊՕԼՍՈՅ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԱՌԺԱՄԵԱՅ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐ-
ԴԻՆ.—ՍՊԱՌՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ Կ. ՊՕԼՍՈՅ ԵԿԵ-
ՂԵՑԵԱՑ ԱՌԱԳԵՐԵՑՆԵՐՈՒՆ.—ՄԵՅ ՏՊԱՒՈՐՈՒ-
ԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՎՐԱՅ.—ՆԱՋԸՄԸ
ԻՆՁԵՐ ԿԸ ՊԱՐՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ.

Կ. ՊՕԼՍՈՅ, 6-18 յունիս 94

Յոյսն է թէ Հնչակեան Կ. ՊՕԼՍՈՅ Մասնախումբի վարչական ժողովոյ որոշմամբ պատրիարքական փոխանորդ տ. Գաբրիէլ Ժ. Վ. ՃէվաՏիքեան հրաժարական մատուցած էր ամենայն խոհանութեամբ, յայտարարելով թէ յայտուհեալ ոտքս կ'որի՛ թէ որ պատրիարքարանի դռնէն ներս մտնեմ: Պատր. փոխանորդին ինքնակոչ յաջորդ կառգուած է տ. Խորէն աւագ քահանայ փեսայ: Տերտերին այս ընթացքը շատ զարմանալի է. նախ, որ ինքը, իբր խելացի ծերունի, պարտաւոր էր իրերու վիճակը քիչ մը խորէն քննել, տեսնելու համար թէ կուսակցութիւնս տ. Գաբրիէլ վարդապետի անձին դէմ ո՛ր է ինքի չունէր. նա մի շատ պարզ տէր վիշէր, որ եթէ լաւ գործ մը տեսնելու անկաւորող էր՝ կարող չէր նաեւ վատ գործեր անել: Կուսակցութիւնս անոր պաշտօնին դէմ էր, զի այդ պաշտօնն օրինաւոր ոյժէ մը չէր բխած: Պատրիարքական փոխանորդը կընտրուի խառն ժողովէն, որ օրինաւորապէս պէտք չէ որ գոյութիւն ունենար երեք տարիէ ի վեր, իսկ հիմա ի՞նչ պէտք ալ գոյութիւն չունի այլ ևս, շնորհիւ կուսակցութեանս հզօր ցոյցին:

Այս տեսակետով պատրիարքական փոխանորդը չը պարտէր պաշտօնի վրայ մնալ: Արդ տ. Խորէն քահանան ո՛չ միայն մեր սպառնալիքի ոգիին չը թափանցեց, այլ և նոյն իսկ կրկնակի մեղանչեց անոր դէմ, ստանձնելով այնպիսի պաշտօն մը, զոր ոչ ոք իրեն տուած էր, ոչ իսկ ապօրինաւոր մարմին մը: Ուստի կուսակցութեանը Կ. ՊՕԼՍՈՅ Մասնաճիւղին վարչական ժողովը հարկ դատեց իր հասցէին ուղարկել հետեւեալ նամակը, տըպեալ տառերով գրուած.

«Տ. Հայր,

«Անձի խնդիր չունինք, ինչ կաճապարէք ուրեմն հայր սուրբին փոխանորդել: Պատրիարքարանի բոլոր ժողովներ ալ ապօրինաւոր են: Կամ Սահմանադրութիւնը յարգեցէք եւ կամ քաջուհեցէք: Եթէ շարունակէք ձեր պաշտօնին գլուխը մնալ՝ ձեր վսեմաշուք վարչապետին բաղդակից կը դառնաք:»

Հնչակեան Մասնախումբ Կ. ՊՕԼՍՈՅ,

(կնիք մասնաճիւղի)

Աւելորդ է ըսել թէ տ. հայրն այս նամակը ստացածին պէս փութաց իր հրաժարականն ուղարկել ոստիկանութեան նախարարին, որ հիմա հայոց պատրիարք

ընտրած է ինքզինքը. ան ալ ինքնակոչն էր Կարգէն է:

Եւրէկ Կ. ՊՕԼՍՈՅ բոլոր եկեղեցիները ցրուեցան ըսպառնական նամակներ, աւագերէցներուն և քարոզիչներուն հասցէին, որոց ահաւասիկ պատճէնը.

«Տէր հայր, (կամ Հայր սուրբ կամ Սրբազան)

«Անգղեան մատնիչ մըն է. նա այլ եւս Հայոց պատրիարքը չէ: Արդ, Հնչակեան կուսակցութեան ՊՕԼՍՈՅ Մասնաճիւղի վարչական ժողովը կը հրամայէ ձեզ, որ պատուիրէք ձեր եղբայրակիցներուն (կամ ձեր իշխանութեան տակ գտնուող քահանաներուն), որպէսզի Անգլեանի անունն այլ եւս չը յիշուի պատարագի միջոցին: Եթէ մեր սոյն պատուէրը չը գործադրէք, ձեր կեանքը վտանգի մէջ է:»

Հնչակեան Մասնաճիւղ Կ. ՊՕԼՍՈՅ.

(կնիք կուսակցութեան)

Այն ամեն եկեղեցականները, որոնք բաղդ ունեցան այս նամակը եկեղեցւոյ արարողութեան միջոցին ստանալու՝ համակերպելով կուսակցութեանս հրամանին՝ Անգլեանի անունը չը յիշեցին երէկ պատարագի միջոցին: Մինչեւ յառաջիկայ կիրակի ուրեմն Կ. ՊՕԼՍՈՅ ո՛չ մի եկեղեցին այլ եւս չպիտի լսէ աղագաւ շէյխին անունը:

Պաւառները շատ գեղեցիկ գործ մը պիտի ընէին, եթէ այս մասին հետեւէին ՊՕԼՍՈՅ օրինակին: Աւելորդ չէ աստ յիշեցնել թէ այն օրէն ի վեր, երբ Անգլեան շէյխը եւ Երուսաղէմի արաբ Ահմադեանը Մաքսուտ Սիմօն պէյի հետ դաւեր կը նիւթէին Տաճկաստանի հայրերը ու Էջմիածնայ ընդհանրական հայրապետութեան բաժնեւոր՝ այն օրէն Մանչէսթրի փոքրաթիւ գաղթականութիւնն որոշեց այլ եւս տեղւոյն մատուռին մէջ չը յիշել Կ. ՊՕԼՍՈՅ եւ Երուսաղէմի դաւադիր պատրիարքներուն անունները:

ՊՕԼՍՈՅ աւագերէցներուն եւ քարոզիչներուն ուղղեալ նամակները մեծ ուրախութիւն պատճառած են հայ հասարակութեան մէջ, որ իր ամբողջութեամբ բացարձակապէս համակողմիք է կուսակցութեանս բոլոր շարժումներուն եւ գործողութիւններուն: Կուսակցութեանս մանաւազ վերջին ամիսներուն մէջ կատարած ձեռնարկութիւններն ահագին տպաւորութիւն յառաջ բերած են ՊՕԼՍՈՅ ժողովուրդին վրայ:

Եւրէկ ոստիկանութիւնը ձերբակալեց Ալեքի փոշայի ժամկոչը եւ ուզեց իմանալ թէ քարոզչին ուղղեալ նամակն ո՞վ բերած ձգած է եկեղեցին: Ժամկոչը ի հարկէ ոչինչ չէր կարող գիտնալ. խեղճ մարդը մինչեւ իրիկուն բանտարկուելէ յետոյ արձակուեցաւ, պայմանաւ որ այսօր իրիկուն դէմ ոստիկանութեան պաշտօնատունը երթայ, ուր պարզուկ ժամկոչը բաղդ պիտի ունենայ նախարար Նազըմին ներկայանալու, որ անձամբ պիտի կատարէ հարցաքննութիւնը: Ալեքի փաշայի նամակն այժմ ոստիկանութեան գուռը կը գտնուի:

Ոստիկանութիւնն ուզած է Խսկիւտարի եկեղեցիներուն ուղղեալ նամակներն ալ ձեռք անցունել, բայց թաղ խորհուրդները մերժած են, յայտարարելով թէ իրենք պատրիարքարան պիտի ղրկեն զանոնք եւ ոստիկանութիւնը եթէ ուզէ՝ կրնայ պատրիարքարանէն պահանջել:

Ոստիկանութեան նախարար Ն. Սողոմ Կէյ անցեալ շաբթու վեզիրութեան աստիճանին բարձրանալով՝ այժմ դարձած է Ն. Սողոմ փաշա: Աստուած բարի վայելում պարգեւէ: Սուլթանն այդ պատիւն ըրած է մատուցած բարւոք ծառայութեան ց համար. այդ կը նշանակէ պարգապէս Ն. Սողոմի անհատ ատելութեան եւ ձեռք առած միջնադարեան միջոցներուն համար դէպի հայկական խնդիրը, որպէսզի սպանէ, անհետացնէ զանի: Ուստի Ն. Սողոմի փաշայութեան աստիճանը տուողը ոչ թէ սուլթանը՝ այլ հայկական խնդիրն է: Սա կէտը մութ է մեղի թէ Ն. Սողոմի գործունէութիւնը մինչեւ որ աստիճան կրցաւ իր նպատակին հասնիլ. կը վախճանք (եւ այս վախճումը սուլթանը շատ սիրելի ուս յառաջ կուգայ), կը վախճանք, որ մի գուցէ Ն. Սողոմի իր ձախող գործունէութեամբ պաճառ եղաւ հայկական խնդիրն առաւել քան երբէք կենդանացնելու: Ինչ եւ իցէ, աստիճանի այս բարձրացումը շատ մը ծեր պաշտօնեաներու նախանձը շարժած է իրաւամբ:

«Դրօշակ» անուն թերթ մը, իր 8-րդ թիւն մէջ իր Կ. Պօլսոյ թղթակցի բերնով, պաշտօնական ոճով մը կը մեղադրէ «Հնչակի» Կ. Պօլսոյ թղթակիցը, այսինքն մեզ, թէ մենք «սխալ» հաղորդած ըլլանք պատրիարքը զարնող Յակոբին Հնչակեան ըլլալը: Մենք գիտենք թէ «Դրօշակ» այն դիրքը չունի բնաւ, որ մեր հըր-խալը՝ երեւան հանէ պաշտօնական հեղինակաւոր ոճով մը: Եթէ «Դրօշակ» թղթակիցը հետեւած ըլլար Յակոբի հարցաքննութիւններուն, նա անշուշտ անտեղեակ չը պիտի ըլլար, որ իր հերքումն է սխալ ըստ որում Յակոբն ինքն է յայտարարած, որ ինք Հնչակեան է, զոր և մեր պարտքը համարեցինք արձանագրել «Հնչակի» մէջ:

ԿԱՅԻՆ.

ՄԵԾ ՅՈՒՋՈՒՄՆԵՐ ԵՕՉՈՏՈՒԱԾ

ՔԱՂԱՔԻՆ ՄԻՒՖԹԻՆ ԿՏՈՐ ԿՏՈՐ ԵՕՉՈՏՈՒԱԾ.

ԸՆԴՀԱՆՐԱՒ ՎԱՅԵՐՈՒ ԵՒ ԹՈՒՐԿԵՐՈՒ ՄԻՋԵՒ

— ԱՆՆՈՒՐ ԽՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒ-

ԹԵԱՆ ԿՈՂՄԵՆ.— ՂԱԶԻ ՕՍՄԱՆ ՓԱ-

ՇԱՅԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅ ՅԵՂԱ-

ՓՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՎՐԱՅ.

Կ. Պօլսոյ, 8—20 յունիս 1894.

Մայիս ամսոյ սկիզբը շատ մեծ յուզումներ տեղի ունեցած են Եօզղատի մէջ եւ կառավարութիւնն առաւել քան երբէք իր ուշադրութիւնը կեդրոնացուցած է այդ քաղաքի քաջարի հայերուն վրայ: Հայ վաճառական մը 3-400 ոսկիի չափ պահանջ ունէր զանազան տաճիկներէ. պարտատէրներէն մին, չուզելով իր պարտքը հատուցանել, կը սպառնայ հայ վաճառականին որ իր վրայ քաղաքական ծանր ամբաստանութիւն պիտի ընէ՝ եթէ զրամի համար նեղէ զինքը: Խեղճ մարդն այս

սպառնալիքներէն վախճալով խոհեմութիւն կը համարէ քանի մը օր տունէն դուրս չելլել: Ասոր վրայ թիւրք խուժանը վաճառականին տունը կոխելով եւ վիզէն չուան մը անցունելով՝ կը սկսի քաշկոտել եւ այդ վիճակին մէջ մինչեւ կառավարութեան դուռը կը տանի: Մարդը գրեթէ կիսամեռ եղած էր. կառավարութիւնը ոչինչ միջամտութիւն չընէր. խուժանը հետզհետէ կը ստուարանայ եւ անոնցմէ մին տեսնելով՝ որ վաճառականը դեռ կենդանի է՝ անաստուած կետւոր, դեռ կենդանի՝ ես կըսէ եւ թուրը քաշելով խեղճ մարդուն փորոտիքը դուրս կը թափէ: Այս ամենը տեղի կունենայ կառավարութեան աչքին առջեւ. աւելորդ է ըսել թէ խուժանի թելադրիչներն անպատիժ կը մնան. Հայ Ժողովուրդը տեսնելով այս աղէկարար տեսարանը, սաստիկ կայլայի եւ կը գրգռուի գլխաւորաբար տեղւոյն միւլթիին (կրօնապետին) դէմ, որ շարունակ մզկիթներու մէջ հայերուն դէմ կը մըրստացնէր թուրք ամբոխը:

Եւ այն գիշերն ութը զինեալ հայեր միւլթիին տունը մտնելով կտոր կտոր կընեն անոր մարմինը, իւր միակ արժանի վարձատրութիւն անոր պատճառած չարիքներուն: Թուրք խուժանը կը հասնի հետզհետէ. հայերն ալ կուգան կը միանան իրենց ընկերներուն, եւ ահա գիշերուան մթութեան մէջ սոսկալի ընդհարում մը տեղի կունենայ հայերուն եւ թուրքերուն միջեւ: Ըստ տաճական պաշտօնական տեղեկութեանց՝ բացի բաղամիւլ վերաւորեալներէ՝ տասը թուրք եւ քսան հայ մեռած են այն ընդհարումին մէջ: Կառավարութիւնը անմիջապէս Պօլսէն օգնութիւն կուգէ եւ երկու վաշտ զօրք կը շրջակուի Եօզղատ. հայերն իրենց կատաղութիւնը կը թափեն զօրքերուն վրայ եւ ի միջի այլոց կը վերաւորեն հրամանատար փաշան եւ հազարապետ մը, որոնց տեղ նորեր կը զբոսնեն: Ընդհարումներ տակաւին կը պատահին եւ Եօզղատ քանի մը ամսէ ի վեր՝ պաշարման վիճակի մէջ է, եւ քաղաքն ունի այժմ զինուորական ատեան մը, ուր կը դատուին բոլոր յանցաւորները: Եօզղատի մէջ այժմ չորս հարիւր քաղաքական բանտարկեալներ կան, Սեբաստիոյ մէջ՝ հազար յիսուն, Անկիւրայի մէջ՝ հարիւր յիսուն: Ամբողջ Հայաստանի եւ Կ. Պօլսոյ քաղաքական նոր բանտարկեալներու թիւը կը հասնի այժմ մօտաւորապէս չորս հազար հօգի թէ թէ Եօզղատի դէպքին եւ թէ Կ. Պօլսոյ վերջին դէպքերու բերմամբ կառավարութիւնը սկսած է անլուր բռնաւակալութիւններ եւ ճնշումներ ի գործ դնել: Չերեա-կալութիւնը հետզհետէ կը շատնան, Անատոլիոյ գլխաւոր քաղաքները բոլորն ալ գործնականապէս պաշարուած վիճակի մէջ են: Ոչ ոքի կը թողատրեն քաղաքէն ներս մտնել եւ ոչ ոքի՝ անկէ դուրս ելլել: Վաճառականութիւնը փճացած պէտք է նկատել: Արդէն եղած տնտեսական տագնապները կարծես չէին բաւեր, և ահա համաճարակն ու սովը եկան հազարապատիկ ծանրացնել Ժողովրդի անտանելի կացութիւնը: Կրտսէ թէ սովի պատճառաւ Հայաստանի գլխաւոր քաղաքներէն մինչեւ հիմա 10,000 հօգի չափ կովկաս գաղթած են: Երկրին տնտեսական և ընկերական արդի վիճակը՝ միանալով կառավարութեան ծայրայեղ ճնշումներուն՝ պիտի փութացնեն հայ ընդհանուր յեղափոխութեան նը-ուիրական գործը:

Ղազի Օսման փաշա, արքունեաց հրամանատարը, տեսակցութեան մը մէջ յայտարարած է թէ հայ յեղափոխականաց կազմակերպութիւնը խիստ հզօր կազմակերպութիւն մըն է, զոր կառավարութիւնն այժմ՝ իր բոլոր ուժովը կաշխատի բնաջինջ ընել եւ թէ անոնց հիմքը գտած է ... ուր կը կարծէք ... Լօնդօնի մէջ կառավարութիւնն՝ ըստ Ղազի Օսման փաշայի, պիտի սաստկացնէ իր խտրութիւնները եւ հարստահարութիւնները՝ մինչեւ որ բոլորովին «մարէ» գործը։ Կառավարութիւնը տակաւին այնքան միամիտ է որ կը հաւանի իր ընտրած միջոցներուն։ Այդ՝ մեր գործին շատ աղէկ կուգայ. թող կառավարութիւնը երբեք չգիտնայ հայկական առածին ճշմարտութիւնը թէ «հալածուի մարածում» է րի։

ՀԱՅԱԿԵԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ Ի Կ. ՊՕԼԻՍ

Աւագերէցները շատ վախցան իրենց ուղղուած սպառնական նամակներէն եւ իրաւամբ յայտարարեցին թէ իրենց կեանքը վտանգի մէջ ըլլալով չեն կարող պատրիարքին անունը յիշել։ Կառավարութիւնը չափազանց կատաղած է գործին հեղինակները չը կրնալ ձերբակալելուն համար։ Սուլթանը՝ բարկութեան վայրկենի մը մէջ աղաղակեր է. «Դէհ, ես ամէն ամիս իմ գանձէս լրտեսական բանակին 300.000 ոսկի վճարեմ եւ տակաւին հոս իմ քթիս տակ ասանկ գէպքեր տեղի ունենան»։ Շատ մը ժամկոչներ, քահանաներ եւ թաղ խորհրդի անդամներ ձերբակալուեցան այս առթիւ, բայց հարցաքննութենէն ոչինչ դուրս եկաւ։

Պատրիարքը թէպէտ տունէն դուրս չելլեր, բայց իր հրաժարականը տակաւին չէ ընդունուած. սխալ է ուրեմն Եւրօպայի լրագրաց հրատարակած այն լուրը թէ՝ անոր հրաժարականը վերջապէս ընդունուած է։ Մաքսուտ Սիմօն պէյի որպիսութիւնը հարցնելու համար անոր տունը գտնուած պահուն՝ պատրիարքն անամօթաբար յայտարարեց, թէ րերեք անգամ հրաժարական տուի, երբեք անգամուն ալ վեհ. սուլթանը հրաժարականս ետ զրկեց, միտեղ երկ ու հարիւրական ոսկի նուիրելով։ Երեւակայեցէք թէ թշուառական մարդն ամեն անգամուն իր հրաժարականն ետ առած է՝ մի քանի հարիւր ոսկիի փոխարէն։ Հնչակեան Կուսակցութիւնն յունիսի 5-ին որոշեց իրեն զրկել հետեւեալ նամակը։

«Սրբազան,

«Ձեր կարծեցեալ հրաժարականները բոլորն ալ շինծու են եւ միայն թոյլ դիմումներ կընէք սուլթանին եւ իր նախարարներուն։ Այդ, այսօրուրէն սկսեալ ձեզի քսան եւ մէկ օր պայմանաժամ, որ ատեն պէտք է հրաժարիք եւ վերջապէս Պօլսէն հեռանալով վանք մը քաշուիք ձեր րմեղքերը քաւելու»։ Եթէ մեր սոյն պատուէրը գործադրելու ըլլաք՝ ձեր կեանքը կը բաշխենք ձեզ եւ այլեւս

ձեր զօրութիւնը թողունք։ Եւս եթէ յամտեք պատրիարքի միշտ գիտցէք, որ ձեր շուրջը մարդիկ կը պատին զձեզ պատժելու եւ թէ որ տուն ալ մնաք, մենք մի օր ձեր տունն ուժանակով օդը կը հանենք։ Ընտրեցէք, ուրեմն, կեանք կամ մահ։»

Վարչական ժողով

Հնչակեան Կուսակցութեան

Կ. Պօլսոյ Մասնաճիւղի.

(Կնիք Կուսակցութեան)

Մենք վստահ ենք որ պատրիարքն այս անգամ իր ընելիքն աղէկ գիտէ։

ԿԱՑԻՆ.

ԱՒԱԳԵՐԷՑՆԵՐՈՒ ԸՆԹԱՑԲԸ. — ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

ՅՈՅՅԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ. — ՍՈՒԼԹԱՆ

ՆԻ ԻՐԱՏԷՆ. — ԱՒԱԳԵՐԷՑՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ.

— ՍՈՒԼԹԱՆԻ ԶԻՋՈՒՄԸ

ՀԱՅԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ.

Կ. Պօլս, 16-28 Յունիս 94.

Առգեանի անունը պատարագի միջոցին չը յիշատակելու համար Կ. Պօլսոյ աւագերէցներուն ուղղեալ նամակները շատ մեծ երկիւղ պատճառեցին ստացողներուն։ Անցեալ կիրակի, 12-24 յունիս, մէկ քանի եկեղեցի, բնաւ պատարագ չեղաւ. իսկ եկեղեցիներու ամենաստուար մեծամասնութեան մէջ թէ պատարագեցին եւ թէ չը յիշեցին. չը յիշատակող եկեղեցիներուն պարագլուխն եղաւ պատրիարքանիստ Մայր եկեղեցին։ Բոլոր եկեղեցիներուն մէջ ալ առհասարակ ժողովուրդեան մեծ բազմութիւն հաւաքուած էր եւ ամենքը միասին կը սպասէին յիշատակութեան ժամուն. երբ քահանայք ու դպիրները զանց ըրին Առգեանի անունը՝ ժողովուրդը կարծես մեծ շունչ մը առաւ եւ ժպտադէմ եւ զուարթ բոլորը մէկէն եկեղեցիէն դուրս ելան, յայտնապէս ցոյց տալով թէ իրենց համար ամենամեծ կարեւորութիւն ունէր յիշատակութեան խնդիրը եւ կարծես միայն անոր համար եկեղեցի եկած էին։

Եկեղեցիները լրտեսներով լեցուն ըլլալով, անմիջապէս սուլթանին հաղորդուեցաւ թէ Առգեանի անունը չէ յիշուած պատարագի միջոցին։ Այս լուրն այն աստիճան զինքը բարկացուց, որ անմիջապէս խիստ իրատ է մը հանեց, պատուիրելով Առգեանի անունը յառաջիկայ կիրակի բոլոր եկեղեցիներուն մէջ յիշել եւ քահանաներու անձին թագաձուլութեան համար եկեղեցիները զինուորներով եւ ոստիկաններով պաշարել, եւ իր սոյն իրատ էն չը գործադրող քահանաները բոլորն ալ արքայի դատապարտել, ու միանգամայն զինուորական մեծ պատիւներով Առգեանը վերահաստատել պատրիարքական գահուն վրայ։ Այս իրատէն յետոյ զինուորական իշխանութիւնը աւագերէցներուն եւ բարոզիչներուն հաղորդեցին սուլթանի պատուէրը կամ իրենց բառով՝ էմրը սամին (բարձրագոյն հրամանը)։ Քահանայք խուսափողական պատասխաններ տալով՝ որոշեցին ընդհանուր ժողով գումարել եւ յառաջիկայ կիրակի իրենց բռնելիք ընթացքն որոշել։ Այս ժողովն

Գրեկի տեղի շնորհաւ եւ միաձայնութեամբ որոշուեցաւ շնչակեան Կուսակցութեան պատուէրներուն հպատակելու, ասիկայ ի հարկէ ազդասիրական եռանդի մը արդիւնքը ըլլալէ աւելի՝ իրենց զգացած երկիւղն էր:

Բայց շատ զարմանալի է, որ սուլթանն այնչափ փրփրալէ եւ կրակ ու բոց կտրելէ յետոյ, յանկարծ մեղմացաւ եւ երէկ իրիկունս դէմ պատրիարքին հրաժարականն ընդունեց: շնչակեաններուն եղած այս առաջին զիջումը սուլթանին համար միսթարական է եւ ամեն անգամ ինքն է՝ որ պիտի ամենէն առաջ նպաստաւորութիւն ձգտէ այսպէս շարունակէ հետեւել շնչակեանն եր ու գծած ուղղութեան:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆՆ Ի Կ. ՊՕԼԻՍ

Ով որ լսելու ահանջ ունի՝ թող լսէ: Քիւրտերու հարստահարութիւնը կը կատարուի նոյն իսկ... Ի Կ. Պոլիս: Կարգացէք հետեւեալ իրողութիւնը:

Կիւլպէնկեան հանրաժողովը վաճառականական տունն ասկէ մէկ երկու տարի առաջ խան մը շինել կուտար, որու գետինը քանի մը քիւրտերու կը պատկանէր: Կիւլպէնկեաններն այդ գետինն իրենց տէրերէն ծախու առին, իւրաքանչիւրին վճարելով իր կալուածքին համարժէքը: Քիւրտերէ մէկուն հոգն իր գիրքին պատճառաւ աւելի արժէք ունենալով՝ երեք հարիւր ոսկի աւելի վճարուեցաւ իրեն: Քիւրտին ընկերը, նա ալ քիւրտ, օրին մէկը կը ներկայանայ Կիւլպէնկեան տան պետ Պատրիկ էֆէնտին եւ կը պահանջէ իրեն եւ 300 ոսկի տալ՝ քանի որ իր ընկերոջը տուած էր: Պատրիկ էֆէնտի կը պապասխանէ թէ ընկերոջը հողը աւելի արժէք ունենալուն համար աւելի վճարուեցաւ, իսկ իրը՝ այդ արժէքէն զուրկ էր եւ երկուստեք հաւանութեամբ անոր փոխարէն արդէն ամբողջապէս վճարուած էր: Բայց քիւրտը խօսք չէր հասկանար եւ կը պնդէր իր պահանջը: Քին վրայ: Պատրիկ էֆէնտի չուզելով քիւրտի մը թըշնամութիւնը շահիլ՝ առաջին անգամ անոր 100 ոսկի տալու անխոհեմութիւնը կ'ունենայ: Ժարդն այդ 100 ոսկին առնելով կը մեկնի, բայց քանի մը շաբաթ ետքը նորէն կուգայ եւ դարձեալ 100 ոսկի կըստանայ՝ առիւթ մը ետքը կուգայ երրորդ անգամն ըլլալով 100 ոսկի ուզել եւ կ'առնէ կերթայ՝ խոստանալով այլեւս չի գալ եւ դրամ չը պահանջել: Սակայն մոռնալով իր խոստումը՝ պայրամին մօտ վերստին կուգայ, յայտարարելով թէ դրամ չունի: Պատրիկ էֆէնտի կը հանէ հինգ ոսկի կուտայ՝ յիշեալին: Պայրամէն քանի մը օր վերջը, իրիկունս մը Պատրիկ էֆէնտի կ'ամուրջէ կանցնէր: Գատըգիւղի նաւամատոյցն երթալու: Ճամբան մէկէն իմէկ իր գէմը կ'ելլէ յիշեալ քիւրտը եւ կը յայտարարէ որ դրամ չունի, պէտք է դրամ տայ իրեն, խնդրելով միանգամայն՝ որ Կիւլպէնկեանց գործերուն մէջ իրեն պաշտօն մը յանձնուի: Պատրիկ էֆէնտի այս անգամ կը մերժէ, որուն վրայ քիւրտը մի այնպիսի սոսկալի ապտակ կ'իջեցնէ անոր՝ որ խեղճ գետին կիւնայ: քիւրտը այդչափով չը բաւականանալով՝ կսկսի անոր կոկորդէն սեղմել եւ կը ջանայ խեղճել քանի: Պատրիկ էֆէնտի պզտիկ եղբայրը Յարութիւն էֆէնտի, որ

այն պահուն նոյն մօտ մը գտնուէ՝ կ'ստանկէ... Երեսներ, հասէք, եղբայրս կսպաննեն կոր: Բօլիսները՝ որ շատ մօտ էին՝ փոխանակ օգնութեան հասնելու անտարբեր կը պատասխանեն իրեն ինչ իրաւունք ունիս մեզի առանց տիտղոսի կոչելու: Դեր վեհ, սուլթանն անգամ մեզի բօլիս էֆէնտի կ'անուանէ: Բարեբաղդաբար ճամբորդներ կուգան ազատել խեղճ Պատրիկ էֆէնտին, որ այժմ անկողնոյ կը ծառայէ: Իսկ քիւրտն ա զատ կը պատուի: Ոստիկանութիւնը յայտարարած է թէ նա այն իրիկունս արբած էր եւ ըրածին գիտակցութիւնը չունէր...:

Ով որ ահանջ ունի՝ թող լսէ:

ԿԱՑԻՆ:

ՇՆՁԱԿԵԱՆ ԴՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ Ի Կ. ՊՕԼԻՍ

ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԹԵՋԲԵՐԷՆ.— ՆԱՄԱԿՆԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ.— ՆԱՄԱԿՆԵՐ Կ. ՊՕԼՍՈՅ ԲՈՂՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ.— ՆԱՄԱԿՆԵՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՆԱԶԸՄ ՓԱՀԱՅԻ ԵՒ ՄԵԾ-ԵՊԱՐԲՈՍ ՃԷՎԱՏ ՓԱՀԱՅԻՆ.— ՆԱՄԱԿՆԵՐ ՄԵԾ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒՆ.— ՊԱՅՅՈՒԹԻՒՆ ԹԻԹԻՒՆՆԵՐՈՒՆ.— ՍԱՆ ՄԷՋ.— ԿԱՌԱՎԱՐԱՆ ՏԵՐՈՒՆՈՒԹԻՒՆՔ:

Կ. Պոլիս, 21 յունիս 1894.

Մեր նախորդ նամակով իմացուցած էինք ձեզ թէ սուլթանը, զիջում ընելով շնչակեան սպանախիթներուն, ընդունած էր վերջապէս Ալըգեանի հրաժարականը: Այս առթիւ պատրիարքարան ղըկուած է թէ զքէրէ մը դատական նախարարութեան կողմէ, որով կրօն. և քաղ. ժողովներն ի նիստ կը հրաւիրուին՝ պատրիարքական յայտընէն ընտրելու համար (սպարք փաղ-րիքին խալիֆինի ինթիլապ իթմէք իշիւն րուհանի վէ ճիսմանի մէճլիսէրինին իճթիմա գըլընմասը եւն): Յայտնի է թէ պատրիարք ընտրելու ձեռնհասութիւնը կը պատկանի միմիայն Ազգային Ներսիսի. Ժողովին և ոչ թէ կրօն. և քաղ. ժողովներուն: Բայց Սահմանադրութիւն և Ներսիսի. Ժողով անուններն այնքան անախտօք կը հնչեն սուլթանի ականջին, որ նա չուզեր և չէ ուզած երբեք անոնց գոյութեան իրաւունքն ընդունել գոյութիւն՝ որ ծնունդ առած է իր նախորդներուն օրովը և վաւերացմամբը: Եւ արդէն Ալըգեանի հրաժարականին միջեւ հիմա ձգձգուիլը եւ չընդունուիլը մասամբ նորընտիր պատրիարքի ընտրութեան առթիւ ծագելիք դժուարութիւնն էր: Հիմա կուգուի աճապարանօք այս դժուարութիւնն: Եր Կիւլպէնկեան և Կիւլպէնկեան խոյս տալ. ուստի խառն ժողովը, հակառակ հաստատուած օրէնքին, ի նիստ կը հրաւիրուի գահավէժ և ապօրինաւոր ընտրութիւն մը կ'ատարելու: Ժողովուրդը անհրաժեշտ կըստանայ շնչակեան և նորինութեան, զի այս պահուս, ինչպէս և մինչեւ այժմ, շնչակեանները միայն գործնական ներկայացուցիչ և պաշտպան կը հանդիսա-

նան ժողովուրդի ամենտեսակ իրաւունքներուն:

Կուսակցութիւնս փափաքելով պսակել ժողովուրդի ընդհանրական ակնկալութիւնները՝ հետեւեալ նամակները շրջեց կրօն. և քաղ. ժողովներուն:

«Պօքրապատիւ

«Տ. Գրիգորիոս Արքեպիսկ. Յովհաննէսեան,

Լտնապետ կրօնական ժողովի.

Սրբազան.

Կուսակցութեան տեղական Մասնաճիւղի վարչութիւնը կը տեղեկանայ թէ կառավարութիւնն ի մօտոյ ի նիստ պիտի հրաւիրէ կրօնական ժողովն, որպէսզի քաղ. ժողովին հետ միանալով տեղապահի կամ նորընտիր պատրիարքի ընտրութիւն կատարէք:

Կղերին եւ ազգային մարմիններուն թոյլ եւ անտարբեր ընթացքով մինչեւ հիմա շատ բան յանձնեցինք այս բռնակալ կառավարութեան ձեռքը, որ հիմա ալ կը յանդգնի մինչեւ եկեղեցւոյ գուռը տարածել իր ոճիրներու շարքը. — Կուսակցութիւնս իր պաշտպան ժողովուրդի անբռնաբարելի իրաւունքին՝ կուգայ յայտարարել ձեզ թէ մեր ազգային սահմանադրութիւնը տարիներէ ի վեր թուրք կառավարութեան կողմէ անտեսուած եւ բռնաբարուած ըլլալով՝ ձեր պաշտօններն ապօրինաւոր են, հետեւաբար բացարձակապէս կարգիլնք ձեզ՝ յանձնարարուած նիստը դումարել:

Եթէ մեր սոյն պատուէրը չի գործադրէք՝ Կուսակցութիւնս իրեն կը վերապահէ տարբեր միջոցներով իր կամքը յարգել տալ ձեզ:

Միեւնոյն ատեն կազդարարենք ձեզ, որ եթէ ո՛ր կերպով կառավարութեան կողմէ տեղապահի կամ պատրիարքի պաշտօն առաջարկուի ձեզի, պարտաւոր էք բացէ ի բաց մերժել:

Նամակիս պարունակութիւնը հաղորդելու էք ձեր բոլոր անդամակիցներուն. հակառակ պարագային՝ ամեն պատասխանատուութիւն ձեր անձին վրայ կը ծանրանայ:

Վարչական ժողով շնչակեան Կուսակցութեան Կ. Պօլսի Մասնաճիւղի.

(կնիք Կուսակցութեան)

Նոյն իմաստով նամակ մըն ալ ղովուած է Կ. Պօլսի քաղ. ժողովին: Նմանապէս նամակներ ղովուած են Կ. Պօլսի գտնուող բոլոր եպիսկոպոսներուն, որոց ահաւասիկ պատճէնը:

«Սրբազան,

«Թուրք կառավարութիւնը ջնջած ըլլալով Ազգ. Սահմանադրութիւնը՝ կուղէ ապօրինաւոր միջոցներով պատրիարքի ընտրութեան ձեռնարկել: Ներկայիս կուգանք յայտարարել ձեզ թէ, երբ այսպիսի ապօրինաւոր տնօրինութեամբ տեղապահ կամ պատրիարք կարգուելու ըլլաք՝ պարտաւոր էք բացէ ի բաց մերժել այդպիսի պաշտօն մը: Հակառակ պարագային՝ Կուսակցութիւնս իրեն կը վերապահէ հարկ եղածն ի գործ դնել:

Այս նամակները ղովուելէն ի վեր տակաւին խառն ժողովն ի նիստ չէ գումարուած եւ յուսալի ալ չէ որ գումարուի: Թուրք կառավարութիւնը նոր պատրիարքը հարենալ ընտրելու համար միայն մէկ եւք ունի իր առջեւ — Սահմանադրութիւնը ճանչնալ իրեւ տիրող օրէնք եւ արտօնել Ազգ. Երեսի. ժողովը կանոնաւոր գումարումը:

Վահաններուն ուղղեալ սպառնական նամակներուն առթիւ 150 ի չափ անմեղ մարդիկ ձերբակալուած էին եւ մինչեւ հիմա բանտը կը մնան: Կուսակցութեան տեղական մասնաճիւղը հարկ դատեց հետեւեալ նամակն ուղարկել ոստիկանութեան նախարար Նաշիմ փաշային: Նամակը գրուած է հայերէն լեզուով.

«Վահաններուն ուղղեալ սպառնական նամակներուն առթիւ շատ մը անմեղ մարդիկ ձերբակալեցիք. եւ մինչեւ հիմա բանտարկուած կը պահէք:

Եւրոպ. նկատելով՝ որ այդ մարդիկը ո՛ր եւ է կերպով յանցաւոր չեն այդ գործին մէջ, քանի որ իսկ եւ իսկ մենք ենք անոնց հեղինակները. նկատելով որ եթէ նոյն իսկ յանցաւոր ալ եղած ըլլային՝ սակայն ժողովուրդի ընդհանրական փափաղին համաձայն գոհացուցիչ լուծում տուած ըլլալով պատրիարքի հրաժարականին՝ իրենց ենթադրեալ յանցանքը ջնջուած եւ արդարացած կըլլայ (թէպէտ կը կրկնենք թէ բնաւ յանցաւոր չեն), — կուգանք հրաւիրել ձեզ որպէսզի անմիջապէս ազատ արձակէք պատրիարքական հարցին առթիւ ձերբակալուած բոլոր քանտարկեալները: Սոյն նամակի պատճէնները ուղարկուած են մեծ տէրութեանց դեսպաններուն:

Վարչական ժողով շնչ. Կ. Պ. Պ. Մ.

(կնիք Կուսակցութեան)

Այս նամակի պատճէնը հաղորդուեցաւ մեծ եպարքոսին եւ անոր ֆրանսերէն թարգմանութիւնը՝ մեծ տէրութեանց դեսպաններուն, հետեւեալ նամակով միապին.

«Կուսակցութեան տեղական մասնաճիւղի վարչական ժողովը նամակ մը ուղղած է ոստիկանութեան նախարար Նաշիմ փաշային ի մասին հայ բանտարկեցի, որու թարգմանութիւնը ներփակելով աստանօր, կը յանձնենք ձեր նկատողութեան՝ իբրեւ ներկայացուցիչ Պէրլինի դաշնագիրը ստորագրող սէրութեանց միոյն».

Իդիմաց շնչակեան Կուսակցութեան

Կ. Պօլսի Մասնաճիւղի.

(կնիք)

Այս շաբաթ իրիկուն 18 յունիս, իրիկուն ժամը մէկուկէսին (ը. թ.) Թանօթ դաւաճան-մատնիչ Մկրտիչ Թիւթիւնճիէֆի տան մէջ պայթուցիկ ուռմը մը ձրգուած էր: Ռուսները սոսկալի որոտումով կը պայթի եւ ձայնը շատ հեռուէն լսելի կը լինի: Նոյն պահուն Թիւթիւնճիէֆ տունէն բացակայ էր: Ռուսներն պայթումով տանը բոլոր ապակիները կը ջախջախուին եւ պատուհանները ջարդ ու փշուր եղած գետին կը տապալին. Թիւթիւնճիէֆի կինն ու աղջիկը նուազած գետին կիցնան: Նոյն պահուն դրացիները դուռը խորտակելով ներս կը խուժեն եւ օգնութեան կը փութան ահաբեկ նուազած կիներուն: Այս դէպք մեծ տպաւորութիւն թողած եւ երկիւղ ազդած է մատնիչ-ըտններուն: — Կառավարունըն աշխուժեալ կը փնտռէ հեղինակները, բայց մինչեւ հիմա իր բոլոր աշխատութիւնք ապարդիւն մնացին. . .

Մարտուտ Սիմոն պէյ տպարանից ընդարձակ կառավարութեան հրաման խնդրեց ֆրանսիայի ջերմութիւնները երկար բայց կառավարութիւնը մերժեց խնդրուած հրամանը:

Սեփականութիւն կը տիրէ այստեղ գործնական տնտեսութիւնը մանաւանդ՝ իրենց ծայրայեղութեանը մէջ ծիծաղելի են. քաղաքներու հայերէն տնտեսներն արգիւտեցան. չպիտի կրնան գրուիլ կարին, Պարտիզակ, Բաղէշ, Բաքերդ, Տիգրանակերտ եւն, այլ անոնց թիւրքերէնները պիտի գործածուին:

ԿԱՑԻՆ.

ԿԱՐԵԱՆԻՆԻ ՊԱՏՈՒԹԻՒՆԻ ՊԱՏՈՒԹԻՒՆԻ

«Հնչակի» ներկայ տարեշրջանի Nr 5-ի մէջ զետեղվեցան մի վստահելի աղբիւրից մեր ստացած գաղտնի տեղեկութիւնները երկու դաւաճան պատրիարքների, Ալեքեանի եւ Յարութիւնի, ու Բ. Դուան մէջ լարած դաւերը կիլիկիայի կաթողիկոսական աթոռի վերաբերութեամբ: Ինչպէս սպասելի էր, այդ յայտնութիւնները խոր տպաւորութիւն թողին հայ հասարակութեան վրայ և գրգռեցին նրա յուզված ուշադրութիւնը: Մեր պարտքն ենք համարում շարունակել երեւան հանել մեր թշնամիների այդ գաղտնի գործերի ընթացքն ու վիճակը, այդ բոլորը քաղված լինելով միեւնոյն հաստատ աղբիւրից:

«Ինչպէս իմացել էի ձեզ կանխաւ, Երուսաղէմի պատրիարքը թեմական այցելութիւնների պէտք է երթար, ուխտաւորներին ճանապարհ դնելուց վերջ, եւ պէտք է այցելէր նախ Դամասկոսի, ապա Պէտրութի ու Լաթաքիայի հայոց վանքերը: Բայց այժմ հրաժարվեցաւ նա իր մտադրութիւնից եւ յետաձգեց իր այդ ուղեւորութիւնը մինչեւ շաշուն: Բ. Դուան արդի քաղաքականութիւնը, մանաւանդ Ալեքեանի եւ Մարտուտ Սիմոն բէյի կեանքերի դէմ տեղի ունեցած սպանութիւնների փորձերը եւ կիլիկիայի հայերի այսօրայ տառնապալից կացութիւնը միմեանց հետ միանալով մի խմոր կազմեցին, որն անկախելի դարձաւ «անյատակ տակառի» վերատեսուէ խորհրդակցական Յարութիւն պատրիարքին եւ նրա պնակալէղ արքանեակներին: Բայց միւս կողմից էլ իրանց յանձն առած պարտաւորութիւնը եւ դէպի Բ. Դուան ունեցած իրանց պատասխանատուութիւնը մի քիչ թեթեւացնելու նպատակով նրանք խորհուրդ արին եւ իրանց յատկապէս գրծի մէջ բարեփոխութիւն մտցրին: Աւանքի միաբան տ. Գաբրիէլ ծ. վրդ. Անուշեանը, որ հաղիւ հինգ-վեց ամիսներից ի վեր այստեղ վերադարձել է Պարսկաստանի եւ Հնդկաստանի նուիրակութիւնից, որը երեք տարի շարունակեց այդ կողմերում եւ հաղար սակիի մօտ մի դուռ բերաւ այստեղի ծակ տակառը լցնելու համար, — երկու օր առաջ ուղարկվեցաւ Ատանա կամ Մարաշ ուր գտնվում է կիլիկիայի կաթողիկոսը, պատրիարքի կողմից նրան այցելելու, որպիսութիւնը հարցնելու եւ յատկապէս կիրառութեան նախապատրաստութիւնները կատարելու:

«Անուշեան վարդապետը թեթեւօղիկ եւ թեթեւաբարոյ մէկն է. յանձնապատաս մէկ անձ, առանց իրան

յանձնված փափուկ պաշտօնի կարեւորութիւնը հասկանալու գիտակցութիւնն ունենալու: Եւ ինչու այդպիսի մէկին ընտրեցին այդ կարեւոր գործի համար, — որպէս զի եթէ ամուլ մնայ իր պէտքութիւնը, ապարդիւն իր ջանքերը, ձեռնունայն իր վերադարձը, կամ... կամ վերտանգների ենթարկվէ կիլիկիայի սահմաններում, պակաս պիտանի եւ պակաս սիրելի մէկ անձ զոհված լինի դաւաճանութեան ճանապարհի վրայ: Մանաւանդ Անուշեանի ներկայութիւնը վանքի վարչութեան տնօրէն Ժողովում միշտ յուզիչ, միշտ խռովարար էր լինում: Միշտ իր անհանդարտութեամբ նա անհանգստութիւն էր պատճառում ժողովի միւս անդամակիցներին, եւ անգիտակցաբար երբեմն երեւան էր հանում այնպիսի որոշումներ, որ գաղտնի պահել էին ուղում նրա աշխատակիցները, որոշումներ, որ տրվում էին ի վնաս ազգի եւ որոնցից առհասարակ միայն եւ միայն պէտք է օգտվէր վանքը եւ աւելի ստոյգն ասելով պէտք է օգտվէին վանական միաբանութեան մի քանի շահամուտ անձեր, որոնց պետք իրաւամբ «տխրահալ» եւ անդամներն «անբարոյական եւ ասիական կեանք վարող» անուանել էիր «Հնչակի» Nr 6-ում:

«Այժմ պէտք է պարզեմ, թէ ի՞նչ էր այն շարժառիթը, որ Երուսաղէմի պատրիարքը եւ սրա վարչութիւնը հարկադրված պէտք է լինէին մի տեսակցութիւն կազմակերպելու կիլիկիայի կաթողիկոսի հետ, եւ թէ ի՞նչ էր այն նախագիծը, որի միայն երեւոյթը պէտք է տեսնէինք հայերս ու օտարները եւ վկայէինք, թէ Երուսաղէմի վանքն ազգասիրապէս կամ «առաքելական աթոռին օգուտ բերելու» համար, որոշել է այդպիսի մի տեսակցութիւն եւ թէ ներքին մութ մի մթնոլորտ չէր պատել նրան:

«Կիլիկիայի արդի Մկրտիչ կաթողիկոսն անցեալ տարիներ եւ մանաւանդ 1893 թ.-ին գրով փափագ էր յայտնել Երուսաղէմի պատրիարքութեան, թէ իր ծերութեան վերջին օրերը խաղաղ անցկացնելու նպատակով ուղղւում է Երուսաղէմի վանքն առանձնաւա, որի հին միաբաններիցն է ինքը, բոլորովին հրաժարվելով կաթողիկոսական աթոռից: Եւ որպէսզի Երուսաղէմի վանական վարչութիւնն իր պատրիարքի հետ յօժարակամ վերաբերվէ դէպի իր այդ ցանկութիւնը, նա վանքի տրամադրութեան տակ կը գնէր մի քանի հազար ոսկիի դուռնու, իր ծերութեան անհրաժեշտ պէտքերը գոհացնելու եւ վանքի շրջափակում մի գերեզման, մի փոս գնած լինելու համար: Այն ժամանակ (դեռ Յարութիւն պատրիարքը Կ. Պոլիս չը գնացած) ոչ պատրիարքը եւ ոչ էլ միաբանութիւնը չը համակերպեցան այդ յայտնված փափագներին: Նրանք աւելին պահանջեցին: Նրանք առաջարկեցին, որ Մկրտիչ կաթողիկոսն իր ամբողջ գոյքը, թէ ահաբիւն կալվածները, թէ խոշոր դրամ, կտակէ վանքին. կտակը պէտք է գործադրվէր իր մահից վերջ: Կաթողիկոսը չընդունեց: Բանակցութիւն, թղթակցութիւն անհետեւանք մնացին, մինչեւ որ Յարութիւն պատրիարքը Կ. Պոլսից դարձաւ՝ իրան առաջարկված պետական դաւադրութիւնը շատակած: Նա մտադիր էր Մկրտիչում տեսակցել կաթողիկոսի հետ, բայց չը յաջողվեցաւ, հետեւաբար տեսակցութիւնը գաղտնի անել որոշվեցաւ: Հիմա էլ քաղաքականութիւնը և ծրագիրը փոփոխութիւններ կրեցին, սրա

Համար էլ դաւաճանութիւնը վերոյիշեալ կերպարները
ստացաւ:

Պէտք է հարցնել Գարրիէլ վարդապետից, թէ թնշու-
Ատան է գնում, պէտք է պատասխանէ. Պէտք է եմ
Երուսաղէմի վանքին նպաստելու համար բաժնակ հան-
գանակել: Դրաւ որ նա պէտք է մի քիչ բաժնակ ժողո-
վէ՝ նրա հակերի մը ծրարելու իր նսնմ խորհուրդը:
Սա ուսմիկ դասակարգին տրվելիք պատասխանն է:

Պէտք է մի քիչ բարձր դասակարգի անհատներ անեն
այդ հարցումը, նա պէտք է պատասխանէ. Պէտք է կա-
թողիկոսը մի կտակ ունի, որը պէտք է գործադրվէ մա-
հից յետոյ. նա ցանկանում է պայմաններ կնքել Ե-
րուսաղէմի վանքի հետ, որպէսզի իր մարմինն այնտեղ
թաղվէ. ես եկել եմ որ այդ կտակն իր մահից սուղ
իր հետ կարգադրեմ:

Պէտք է աւելի զարգացածներից ուղղվէ այդ հարցը,
երկրորդ հարցման պէտք է աւելացնէ, Պիլիկիայի արդի
կաթողիկոսն ուզում է իսպառ հրաժարվել կաթողիկոսու-
թիւնից և իրրեւ բնիկ միաբան Երուսաղէմի ս. Յակո-
բայ վանքի, փափագում իր ծերութեան օրերն այնտեղ
անցկացնել. ես եկայ, որ իր փափագի համաձայն գոր-
ծը կարգադրեմ և դառնամ:

Պէտք է Անուշեանն այս եղանակներից և ոչ մին յա-
ջողէ կատարել, ձեռնունայն ետ պիտի դառնայ, այնպէս
չէ: Պատրիարքի ազդեցիկ արքանեակներն էլ Անուշ-
եանի խոսքերը ընթացից ձանձրացած՝ նրա բացակա-
յութիւնից օգուտ պէտք է քաղեն մինչև որ աշուներ հաս-
նէ: Եւ եթէ քաղաքի նոյնի էլ արդի պայմանով
շարունակվէ, պատրիարքն այն ժամանակ դուրս պէտք է
գալ վանքից իր բաղձացած նպատակն իրագործելու համար:
Իսկ եթէ Անուշեանը, դաւաճանութեան երեւան գա-
լու պատճառով, մի որ եւ է փախդի ենթարկվէ Վի-
լիկիայի սահմաններում... այդ էլ ոչինչ. նա այն ժա-
մանակ պատրիարքն և նրա արքանեակներին երջանկութիւն
պիտի պատրաստէ: Կարծեմ կարողացայ հասկացնել:

Պէտք է անցեալ տեղեկութիւնն եւ թէ Յարութիւն
պատրիարքի՝ եւ քառ արքանեակների նոր կարգադրու-
թիւնը ոչ միայն Վիլիկիայի կաթողիկոսին, այլ եւ թե-
մերից մի քանիներին թէ դրով եւ թէ յատուկ պատ-
ուիրակների միջոցով իմաց տրված է, որպէսզի զգուշա-
նան եւ եթէ հարկ լինի, մինչեւ իսկ արժանա-
պէս պէտք է պատուեն, յարգեն ու մե-
ծարեն Անուշեան վարդապետին: Եւ այդ՝ որովհետեւ նրա
պատգամաւորութիւնն էլ միաձայն և Վիլիկիայի սթոռների
իրաւունքների ու առանձնաշնորհումների պահպանու-
թեան գործին է վերաբերում (! ? !) եւ քանի որ նա ազ-
գը հոգեւորապէս ու բարոյապէս պէտք է կանգնէ իր
աւերակների կոյտերի վրայ (!):

ՀԱՅԿԱՆԵՆԵՐԸ ԵՒ ԹԻՐԻՔ ԿԱԹՈՒՆԵՐԻԹԻՒՆԸ

Յունական «Կրօնագիտ» թերթի յուլիս 3 համա-
րում կարդում ենք հետեւեալը. —

Պայտնի է, թէ մի քանի տարիից ի վեր Աթէնքում
ապաստան են գտել հայ յեղափոխականներ, որոնք Հայաս-
տանի շատ տեղերում եւ նոյնպէս Կ. Պոլսում մասնակցել
են իրանց ընկերութեան արած յեղափոխական շարժումնե-
րին: Յայտնի է, որ այդ ընկերութեան անդամներից շա-

տերը թիւրք կառավարութեան կողմից ձերբակալված են և
ումանք կախաղան հանված: Աթէնքում խմբված այդ յեղա-
փոխականները, որպէս իրանց ընկերութիւնը, նպատակ ու-
նեն իրանց հայրենիքն ազատել և մէկ անկախ կառավարու-
թիւն հաստատել և այդ գաղափարը տարածելու և իրակա-
նացնելու համար, տարիներեց ի վեր հրատարակում են նաև
մի յեղափոխական թերթ, որից հաղարարութիւններ ու-
ղարկում են Հայաստան իրանց եղբայրներին:

Թիւրք կառավարութեան նոր դեսպանը գալով տե-
ղըս, զիմու մներ արեց մեր կառավարութեան, ինչպէսզի ար-
տաքսել այստեղի հայ յեղափոխականներին եւ գրաւել
ու դադարեցնել նրանց հրատարակած թերթը: Այդ նպա-
տակով յատուկ զիմու մներ արեց դեսպանը թէ արտաքին
և թէ ներքին գործերի մինիստրներին: Հելլէն կառավարու-
թիւնը պատասխանեց թէ Յունաստանի օրէնքները չեն թոյ-
լատրում տաճիկ դեսպանի առաջարկի գործադրութիւնը:

Պայտնի պէտք է յիշենք, որ տարօրինակ դէպքեր
են պատահում քաղաքումս հայ յեղափոխականների մէջ:
Այսպէս, մի քանի ամիս առաջ այդ յեղափոխականների
գլխաւորը, ներկայանալով ոստիկանական տեսչութեան, կի-
լիկեցի մի հայի դէմ բողոքեց, յայտնելով, որ այդ անձը
թիւրք կառավարութեան կողմից վարձված է սպանելու ի-
րան, յեղափոխականին: Ոստիկանութեան պ. Տեսուչը, արդէն
անցեալներից փորձառու, հաւատ ընծայեց այդ բողոքին և
անմիջապէս ձերբակալեց այն կալուածի՝ անձը, և ապա մի
քանի վկաներով հաստատվեցաւ բողոքի ճշմարտութիւնը:
Մի քանի օր վերջ թիւրք դեսպանատնը երաշխաւորութեամբ
ու ինչորեքով ձերբակալվածն սկսեց արձակվեցաւ: Բայց
երկրորդ օրը ոստիկանութիւնը ստիպվեցաւ կրկին փնտռել
այն անձը՝ ձերբակալու համար, որովհետեւ այդ ոճրագոր-
ծը զնացել էր վերոյիշած հայ յեղափոխականի տունն իր
չար զիտաւորութիւնը գործադրելու համար, — ոճրագործը
սակայն արդէն անհետացել էր:

„Ա Պ Տ Ը Կ“

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ԲԱՂԱԲԱՆԱՆ ՀԱՆԴԵՍ

Երեսնեալ «Ապագի» № 4, յունիսի համարը:
Սովորականի համաժատ առաջին ամբողջ երեսի վրայ զե-
տեղված է մի մեծադիր նկար, որ ներկայացնում է մարդ-
կային կմախքների ու գանկերի մի բուրգ, որի վրան ցըց-
ված է օսմանեան զբօշակը: Միւս կողմից դէպի այդ բուր-
գը դիմում է մի կին՝ աջ ձեռքին բոցեղէն սուր, իսկ
ձախ ձեռքին բռնած ունի հայ յեղափոխական զբօշա-
կը: Նկարի տակը գրված է՝ ՊԱՅՔ ԲՈՒՐԳԸ ԹԻՐԵՔԻՅԻ
փառքի արձանն է հայկական դատում... բայց խորտա-
կեցուհին, հայկական յեղափոխութիւնն, անյաղթելի է...
«Ապագի» այդ համարի երկու միւս նկարներից մէկը
ներկայացնում է սօցիալիզմը հայերի մէջ և հայ խմբ-
բազիրները, երկրորդը՝ հայկական դատում թիւրք կա-
ռավարութեան բռնած քաղաքականութիւնն՝ իրրեւ լա-
րախաղութիւն և հայ ջոջերն՝ իրրեւ թիւրքի դաւաճոյս
(ծաղրածու):

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և զրամ ուղարկել հետեւեալ հասցեով. —

Athènes. (Grèce). — M. Beniard. Poste restante.

Աթէնք.

Հայկական ազատ տպարան.